ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/90

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.06.2018թ. թիվ 03/26-3/11109-18 գրությամբ «Յասոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.06.2018թ. թիվ ԴՎԱ/2150 գրության հիման վրա, 19.06.2018թ. թիվ 03/26-3/11109-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Յասոն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Յասոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Յասոն» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած 26.06.2018թ. առարկությամբ հայտնել է, որ առկա չեն հիմքեր Ընկերությանը ցուցակում ներառելու համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Յասոն» ՍՊԸ-ն 16.04.2018թ. հայտ է ներկայացրել և մասնակցել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) որոշել է 31.05.2017թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Կոմիտե) պարզելու ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու կամ չունենալու հարցը:

Ի պատասխան վերը նշված հարցմանը, Կոմիտեի կողմից 04.06.2018թ. տրվել է եզրակացություն, որի համաձայն Ընկերությունը ունի 115 491 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություններ:

Վերոհիշյալով պայմանավորված «Յասոն» ՍՊԸ-ն դիմել է Կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 16.04.2018թ. (հայտ ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, համոզվելու համար, թե 16.04.2018թ. ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունները ինչքան են կազմել, և արդյո՞ք վճարված գումարը լիովին բավարարել է վերը նշված օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունները մարված համարելու համար:

Ի պատասխան վերոգրյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից «Յասոն» ՍՊԸ-ին 02.05.2018թ. տրվել է թիվ 1525 տեղեկանքը, համաձայն որի՝ Ընկերությունը 16.04.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է հարկային պարտավորություններ.

Տուգանքներ և վնասի հատուցման գումար՝ 115 491 ՀՀ դրամի չափով,

Դեբետային մնացորդ ԱԱՀ-ի գծով՝ 1 139 381 ՀՀ դրամ չափով:

Վերը նշված տուգանքների և վնասի հատուցման գումարը առաջացել է Կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության հարկային պարտավորությունների առաջացման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ 01.02.2018թ. կազմված թիվ 1501457 վարչական ակտով (այսուհետ նաև՝ Ակտ), որի համաձայն Ընկերությունը տուգանվել է 314 600 ՀՀ դրամի չափով՝ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 410-րդ հոդվածի 1-ին մասի 10-ին կետի:

Նույն որոշման համաձայն՝ առաջադրված գումարը ենթակա է վճարման սույն ակտը ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում:

Ակտը «Յասոն» ՍՊԸ-ի տնօրեն Տ. Խուրշուդյանը ստացել է 01.02.2018թ:

Ակտը ստանալուց հետո, «Յասոն» ՍՊԸ-ն ընկերությանը սպասարկող բանկի՝ «Արարատբանկ» ԲԲԸ-ի Պուշկինի 19 հասցեում գտնվող մասնաճյուղում 07.02.2018թ. թիվ 32 և 33 վճարման հանձնարարականներով (Ակտով սահմանված 10-օրյա ժամկետում) 90008000490 գանձապետական հաշվեհամարին կատարել է համապատասխանաբար 283 140 և 31 460 ՀՀ դրամի (ընդամենը՝ 314 600) վճարում, նպատակը՝ թիվ 1501457 տուգանք (ակտ):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ուսումնասիրության ենթարկելով 07.02.2018թ. ընկերությանը սպասարկող բանկի՝ «Արարատբանկ» ԲԲԸ-ի թիվ 32 և 33 վճարման հանձնարարականները, որոնց միջոցով «Յասոն» ՍՊԸ-ի կողմից կատարվել է հարկային պարտավորությունների՝ տուգանքի մարումը, ընդհանուր առմամբ 314 600 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև դրանք համադրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից 02.05.2018թ. տրված թիվ 1525 տեղեկանքի հետ, Ընկերությունը գտնում է, որ «Յասոն» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում չի խախտել ստանձնած որևէ պարտավորություն, քանի որ գնման հայտը ներկայացնելուց առաջ որպես բարեխիղճ հարկատու կատարել է օրենսդրությամբ սահմանված բոլոր վճարումները՝ ունենալով նաև դեբետային մնացորդ, և համոզված լինելով հարկային պարտավորությունները ժամանակին կատարված լինելու փաստի մեջ, հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին: Տվյալ պարագայում Ընկերության մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորության փաստի արձանագրումը պայմանավորված չի եղել «Յասոն» ՍՊԸ-ի կողմից դրսևորված վարքագծով, ինչի պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ստանձնած պարտավորությա խախտման փաստը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել վերոգրյալը և «Յասոն» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Յասոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/90 ընթացակարգի շրջանակներում 25.06.2018թ. ժամը 10:50-ին և 28.06.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոնշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.06.2018թ. թիվ ԴՎԱ/2150 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 25-րդ չափաբաժնի մասով «Յասոն» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է կատարվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն «Յասոն» ՍՊԸ-ն հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 115 491 ՀՀ դրամ: Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը որոշել է «Յասոն» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«Յասոն» ՍՊԸ-ն չի ներկայացրել նաև Կարգի 45-րդ կետով նախատեսված փաստաթուղթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/90 ընթացակարգի շրջանակներում 25.06.2018թ. ժամը 10:50-ին և 28.06.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված

նիստերի վերաբերյալ, 25.06.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը

:

4. ՍՑ-ԱՄ-2018/90 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/90 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 16.04.2018թ. հայտ է ներկայացրել «Յասոն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2018թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Յասոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 25-րդ չափաբաժնի մասով:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 04.06.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Յասոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 115 491 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Յասոն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.06.2018թ. թիվ 03/26-3/11109-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.06.2018թ. թիվ ԴՎԱ/2150 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 11.07.2018թ. թիվ 01/3-4/38695-18 գրությունը, «Յասոն» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է

իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 16.04.2018թ. հայտ է ներկայացրել «Յասոն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2018թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Յասոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 25-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 31.05.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Յասոն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 04.06.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Յասոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 115 491 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Յասոն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 27.06.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/11692-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով պարզաբանել, թե «Յասոն» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա՝ 16.04.2018թ. դրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան եզրակացությամբ արձանագրված 115 491 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորությունն ինչի հետևանքով է առաջացել:

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 11.07.2018թ. թիվ 01/3-4/38695-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետ-ները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է

օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով:

Ընկերությունը 31.12.2017թ. դրությամբ ունեցել է ԱԱՀ-ից դեբետային մնացորդ 1,773,533 դրամ և 385,650 դրամ գերավճար, վերջինս էլ 01.01.2018թ. դարձել է անցումային գերավճար, որից էլ մարվել է 2017թ. դեկտեմբեր ամսվա եկամտային հարկը: Ընկերությունը 07.02.2018թ. վճարել է 283 140 դրամ և 31 460 դրամ, որից մարվել է անձնական հաշվի քարտում առկա՝ վարչական ակտի հիման վրա առաջացած տուգանքի գումարից՝ 199 100 դրամ, 2017թ. դեկտեմբեր ամսվա եկամտային հարկի գումարից՝ 16 915 դրամ և 2017թ. ոչ ռեզիդենտի շահութահարկից՝ 98 585 դրամ:

ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը, հիմք ընդունելով օրենսգիրքն ուժի մեջ մտնելուն հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող հարկային պարտավորությունների մարման վերոնշյալ կարգավորումները, 26.06.2018թ. N36/4 որոշմամբ մերժել է ընկերության բողոքը, սակայն նույն որոշմամբ արձանագրել է նաև, որ 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին էլեկտրոնային համակարգի փորձնական գործարկման փուլում ընկերությունը տեղյակ չի եղել: Ընդ որում, 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգավորումների կիրառման արդյունքում ընկերության անձնական հաշվի քարտում տույժերի գումարներ չեն առաջացել:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.06.2018թ. տրամադրված եզրակացության՝ «Յասոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 115 491 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Միևնույն ժամանակ ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 11.07.2018թ. թիվ 01/3-4/38695-18 գրությունը, գտնում եմ, որ «Յասոն» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 11.07.2018թ. թիվ 01/3-4/38695-18 գրության մեջ մատնանշված պատճառներով, առկա է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն արձանագրվելու իրավիճակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.06.2018թ. թիվ 03/26-3/11109-18 գրությամբ «Յասոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02540338) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**